



Վարազդատ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

*ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական,
ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

ԳԱՂՏԵԻՔԸ՝ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Օրենքով պահպանվող գաղտնիքի ինստիտուտը կոնֆլիկտացիալ տեղեկության պաշտպանության, ինչպես նաև դրա ստացման և օգտագործման համար նախատեսված իրավական նորմերի համակարգ է:

Արսիտոլոգիական առումով գաղտնիքի ինստիտուտն իրենից ներկայացնում է սոցիալական արժեք, որի՝ օրենքով պաշտպանվածության պայմաններում է հնարավոր միայն տեխնոգեն հասարակությունում մարդու բնականոն կենսագործունեության ապահովումը: Ավաճառ նաև հիմնավորվում է նրանով, որ հոգեբանության մեջ հանրաճանաչ է այն, որ անձի մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկության հրապարակումը համարվում է մարդու հոգեկան անվտանգության սպառնալիքներից մեկը¹:

Գաղտնիքը Ս. Մալխասեանցի բառարանում բնորոշվում է որպես. «ինչ որ պետք է գաղտնի՝ ծածուկ մնայ, հրապարակ չհանվի, ուրիշին չայտնվի... անհատական գործ, խորհուրդ՝ որոնք ուրիշներին անյայտ են մնում»: Այսինքն՝ լեզվաբանական իմաստով գաղտնիքի կենտրոնական բաղկացուցիչը երրորդ անձանց չհայտնելու, ծածուկ պահելու հատկանիշն է:²

Մարդկության պատմության մեջ «գաղտնիք» տերմինն ի հայտ է եկել առաջին պետությունների ծագման հետգուգրնթաց, մասնավորապես, Հին Եգիպտոսի (մ.թ.ա. IV-րդ դարի վերջ) իրավունքի աղբյուրներից հայտնի է, որ պետական գաղտնիքի հրապարակման համար նախատեսված էր մահապատիժ³: Հին

Հռոմում ընդունվել էր օրենք, ըստ որի՝ ուրիշի ստրուկներին տիրոջ վերաբերյալ գաղտնիքի հրապարակմանը հարկադրելը պատժվում էր տուգանքով⁴: Անտիկ աշխարհում վաճառականները վարում էին իրենց առևտրային մատյանները, դրանցում արտացոլված տեղեկությունները համարժեք են այսօրվա իմաստով առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններին:

Ըստ Ի.Վ. Սմոլյովայի՝ այն երկրներում, որտեղ պետական լեզուն կազմված է լատիներենի հենքի վրա գաղտնիք տերմինը բնորոշում են լատիներեն «privatus» բառով կամ դրա փոխակերպումներով⁵, օրինակ՝ ռուսերեն «приватность», անգլերեն «privacy» և այլն: Հարկ է նկատել, որ առաջին անգամ «privacy» հասկացության էությունը բացահայտվել է ԱՄՆ գերագույն դատարանի անդամներ Ս. Դ. Ուորենի և Լ. Դ. Բրանդեսի կողմից, որոնք համարվում են անձնական կյանքի անձեռնմխելիության դոկտրինի հիմնադիրները: Նրանք սահմանում էին «privacy» տերմինը որպես մենակ մնալու կամ պարզապես մոռացված լինելու իրավունք⁶ «the right to be let alone»:⁷

Անգլիացի հանրահայտ իրավագետ, փիլիսոփա Ի. Բենտամը բավականին խիստ է արտահայտվել քրեական դատավարությունում արտոնությունների և գաղտնիքների առկայության վերաբերյալ՝ նշելով, որ գաղտնիքը դատավարությունում չարիք է ⁸, սակայն 20-րդ դարի սկզբին Արևմտյան Եվրոպայում լայն տարածում գտավ գերմանացի իրավագետ Է. Բելինգի կողմից առաջարկված

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

**ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն**

դոկտրինը, ըստ որի՝ քրեական դատավարությունում ապացուցման գործընթացը պետք է իրականացվի որոշակի սահմանափակումներով, այսպես կոչված՝ «ապացուցման արգելքներով», որոնց թվին են դասվում նաև քրեական գործերով վարույթի ընթացքում պետական և ծառայողական գաղտնիքների պահպանումը⁹: Օրենքով պահպանվող գաղտնիքների պաշտպանության վերաբերյալ բազմաթիվ գիտական աշխատություններ հրապարակած Ի. Վ. Սմոլկովայի կարծիքով, հենց այդ իրավական դոկտրինով պայմանավորվեց տարբեր տեսակի գաղտնիքների պաշտպանության համար մի շարք իրավական մեխանիզմների ի հայտ գալը¹⁰:

Գաղտնիքի հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականությունում առկա է բազմաթիվ սահմանումներ, որոնք ունեն ընդհանուր մի շարք գծեր: Այսպես, Վ. Ի. Սմիրնովի կարծիքով, գաղտնիքը ռեժիմի տեսակ է, և տեղեկությունը երրորդ անձանցից պահելու միջոց¹¹: Նշված սահմանմամբ նույնաժամ է գաղտնիքը և գաղտնիության ռեժիմը, քանի որ գաղտնիքի պահպանության համար է նախատեսված ինքնին գաղտնիության ռեժիմը, որը կարող է ունենալ բազմաթիվ դրսևորումներ, մասնավորապես դրանք կարող են կապված լինել գաղտնիքի ստացման, օգտագործման և սահմանափակ հրապարակման հետ: Ա. Կիրպլևիկի և Ի. Մոլոժնոցնեկոյի կողմից տրվել է գաղտնիքի հետևյալ սահմանումը՝ գաղտնիքը տեղեկություն է, որի նկատմամբ հասանելիությունը սահմանափակված է օրենսդրությամբ և որի խախտման դեպքում վրա է հասնում քրեական պատասխանատվություն¹²: Անկասկած նման մոտեցումը չի դիմանում քննադատության, քանի որ առանց իրավական հիմքերի օրենքով պահպանվող գաղտնիքի վերաբերյալ օրենսդրության խախտման դեպքում պարտադիր չէ, որ անձը ենթարկվի միայն քրեական պատասխանատվության, քանի որ այլ պատասխա-

նատվության միջոցներ նույնպես նախատեսված են գաղտնիքի հրապարակման կամ առանց թույլտվության հասանելիություն ստանալու համար: Այս առումով ընդունելի է Ի. Ի. Կուչերովի և Ա. Վ. Տորչինայի կողմից առաջարկված սահմանումը, ըստ որի՝ գաղտնիքը կարելի է սահմանել, ինչպես որոշակի կոնֆիդենցիալ տեղեկության ստացման և օգտագործման՝ օրենսդրությամբ նախատեսված հատուկ հասանելիության ռեժիմ, որի խախտման համար նախատեսված է իրավաբանական պատասխանատվություն¹³: Սակայն, մեր կարծիքով, գաղտնիքի հասկացության սահմանումն իրավական և բովանդակային առումով համեմատաբար ամբողջական ձևով տրվել է Ի. Վ. Սմոլկովայի կողմից ձևավորած հատկանիշների հիման վրա: Ըստ Ի. Վ. Սմոլկովայի¹⁴՝ գաղտնիքն ունի հետևյալ հատկանիշները՝

1. գաղտնիքն ամենից առաջ տվյալ է, տեղեկություն,
2. տվյալները պետք է հայտնի լինեն մեղ շրջանակի անձանց,
3. որոշակի սուբյեկտներին տվյալները կարող են հայտնի լինել մասնագիտական կամ ծառայողական գործունեության արդյունքում,
4. տվյալները ենթակա չեն հրապարակման,
5. տվյալների հրապարակումը կարող է առաջացնել նեգատիվ հետևանքներ,
6. տեղեկությունները տիրապետող անձինք ունեն իրավական պարտականություն դրանք չհրապարակելու,
7. տվյալների հրապարակման համար նախատեսված է իրավաբանական պատասխանատվություն:

Ի. Վ. Սմոլկովայի կողմից վերը նշված հատկանիշների վերաբերյալ իր կարծիքն է հայտնել Վ. Ա. Մագուրովը՝ նշելով, որ իրավաբանական պատասխանատվությունը վրա է հասնում ոչ միայն գաղտնիքը հրապարակելու դեպքում, այլ նաև գաղտնիքի ստացման և օգտագործ-



ման դեպքում¹⁵:

Համաձայնվելով Վ. Ա. Մագուրովի հետ կարծում ենք, որ վերը թվարկված-հատկանիշների թվին պետք է դասել նաև տեղեկության հասանելիության ռեժիմը, որը կախված գաղտնիքի տեսակից կարող է ունենալ տարբեր աստիճանների սահմանափակման ենթակա հասանելիության մակարդակներ:

Մեր կարծիքով, գաղտնիքը տեղեկության (տվյալի) իրավական ռեժիմ է, որի նկատմամբ հասանելիության հնարավորություն ունեն նորմատիվ իրավական ակտով նախատեսված որոշակի շրջանակի անձինք և որի պաշտպանության վերաբերյալ օրենսդրության խախտման դեպքում նախատեսված է իրավական-պատասխանատվություն:

Օրենքով պահպանվող գաղտնիքների տեսակների բազմազանությունն առաջ է բերում դրանք դասակարգելու անհրաժեշտություն: Այսպես՝ իրավաբանական գրականությունում առաջարկվում է գաղտնիքների դասակարգման տարբեր տեսակներ: Գ. Շենյկերտը բոլոր գաղտնիքները բաժանում էր երկու տեսակի՝ անհատական և կոլեկտիվ: Անհատական են համարվում այն գաղտնիքները, որոնք ծագում են մեկ կամ երկու անձանց միջև, իսկ կոլեկտիվ գաղտնիքն առաջանում է համեմատաբար լայն շրջանակի անձանց մոտ և պայմանավորված է մասնագիտական պարտքի կամ օրենքով նախատեսված պարտականության առկայությամբ: Ս. Դ. Բրաժնիկը կոնֆիդենցիալ տեղեկությունը դասակարգում է հետևյալ կերպ.

- անձնական կոնֆիդենցիալ տեղեկություն, որը վերաբերում է մարդու անձնական կյանքին, կրոնական և քաղաքական համոզմունքներին և այլն,
- իրավաբանական անձանց կոնֆիդենցիալ տեղեկություն, որը կազմում է ծառայողական, առևտրային և բանկային գաղտնիք,
- պետական կոնֆիդենցիալ տե-

ղեկություն, այսինքն՝ պետական գաղտնիք կազմող տեղեկություն¹⁶:

Տվյալ դեպքում կոնֆիդենցիալ տեղեկության դասակարգումն իրականացվել է սուբյեկտային առանձնահատկություններով, ինչը գաղտնիքների դասակարգման առումով ընդունելի տարբերակ է:

Հատկանշական է, որ ՀՀ օրենսդրության համաձայն՝ անհնար է գաղտնիքները դասակարգել ըստ գաղտնիության աստիճանների, քանի որ միայն պետական և ծառայողական գաղտնիքն է, որի համար «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է գաղտնիության աստիճաններ: Մասնավորապես, Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ էլնելով պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների կարևորությունից, բնույթից, դրանց պաշտպանության համար անհրաժեշտ միջոցների ծավալից՝ սահմանվում են գաղտնիության երեք աստիճաններ՝

- ա) «Հատուկ կարևորության»,
- բ) «Հույժ գաղտնի»,
- գ) «Գաղտնի»:

Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիության աստիճանը պետք է համապատասխանի նշված տեղեկությունների տարածման հետևանքով Հայաստանի Հանրապետության անվտանգությանը պատճառվելիք հնարավոր վնասի ծանրության աստիճանին:

Գաղտնիության աստիճաններին համապատասխան՝ պետական գաղտնիքի տեղեկակիրներին տրվում են «Հատուկ կարևորության» և «Հույժ գաղտնի», իսկ ծառայողական տեղեկակիրներին՝ «Գաղտնի» դրոշմագրերը:

Ընդ որում՝ մույն Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում այլ տեսակի կամ բնույթի («Ծառայողական օգտագործման համար», «Հրապարակման ենթակա չէ» կամ այլ դրոշմագիր ունեցող, ինչպես նաև առևտրատնտեսական ու գործունե-

ուրջան այլ բնագավառի) տեղեկությունների վրա, որոնք, թեև պարունակում են որևէ բնագավառի գաղտնի տեղեկություններ, սակայն սույն օրենքին համապատասխան չեն դասվում պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին:

Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ միայն պետական և ծառայողական գաղտնիքներն են օժտված գաղտնիության աստիճաններով, իսկ օրենքով պահպանվող այլ գաղտնիքների մասով առկա է գաղտնիության աստիճաններ ունենալու օրենսդրական արգելք:

Մեր համոզմամբ, գաղտնիքների դասակարգման համար նպատակահարմար է թվում դեկավարվել այն մոտեցմամբ, թե ում է պատկանում գաղտնիքը: Այսինքն՝ առաջարկվում է գաղտնիքի սուբյեկտային հետևյալ մոտեցումը՝

- պետական մարմիններ (պետական և ծառայողական գաղտնիք, ինչպես նաև որոշակի դեպքերում առևտրային և բանկային գաղտնիք),
- իրավաբանական անձինք (առևտրային, բանկային, ապահովագրական, փաստաբանական, բժշկական, նոտարական և այլ գաղտնիքներ),
- ֆիզիկական անձինք (անձնական, ընտանեկան, նոտարական, փաստաբանական, բժշկական գաղտնիքներ):

Օրենքով պահպանվող գաղտնիքների մի ստվար հատված կապված է այնպիսի իրավահարաբերությունների հետ, որոնք դուրս են գտնվում քրեադատավարական գործունեությունից, դրանց իրավական կարգավորումն ապահովվում է ճյուղային

օրենսդրությամբ՝ վարչական, քաղաքացիական ընտանեկան և այլն, սակայն հատուկ տեղ է զբաղեցնում փաստաբանական գաղտնիքը, որն ունի ընդհանուր դատավարական բնույթ¹⁷, քանի որ դրա իրավական կարգավորումն ապահովվում է քրեական, վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով:

Այսպիսով՝ գաղտնիքն իր ինստիտուցիոնալ էությամբ հայտնվում է հասարակական կյանքի երկու ոլորտներում՝ սոցիալական և իրավական, ուստիև այն կարող է բնորոշվել որպես սոցիալ-իրավական ինստիտուտ: Նշվածի համատեքստում պետք է ընդգծել, որ քրեական վարույթի շրջանակներում օրենքով պահպանվող գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության և բացահայտման հարցը սերտորեն առնչվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման քրեական դատավարության հիմնաքարային խնդրին: Նշվածից ուղղակիորեն բխում է, որ օրենքով պահպանվող գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության իրավական ռեժիմը սահմանելիս օրենսդիրը պետք է սահմանի այնպիսի կառուցակարգեր, որոնք մի կողմից կապահովեն նշված տեղեկությունների բարձր պաշտպանվածությունը հանցագործությունների կանխման, խափանման և դրանց բացահայտմանն ուղղված գործունեության ընթացքում, բայց և մյուս կողմից չեն ստեղծի անհամաչափ կամ անհատօրհատելի սահմանափակումներ հանցագործությունների բացահայտման նպատակով դրանց օգտագործման համար:

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

¹ Стен Ршетина С.Ю., Смолян Г.Л., Информационно-психологическая безопасность личности // Проблемы информационно-психологической безопасности, М., 1996, էջ 21:
² Стен Գ. Հակոբյան, Բժշկական գաղտնիքի քրեաիրավական պաշտպանությունը. թեկ-

նածուականատենախոսություն, ԵՊՀ, 2018 թ, էջ 14:
³ Петрухин И.Л., Личные тайны (человек и власть), М., 1998, էջ 8:
⁴ Пермяков Максим Владимирович. Категория «тайна» в системе правового регули-



рования: Дис. ... канд. юрид. наук: 12.00.01 Екатеринбург, 2006, 234 с., էջ 22:

- 5 Տե՛ս Աktуальные проблемы охраняемых федеральным законом тайн в российском уголовном судопроизводстве: монография, -М., Юрлитинформ, 2014, էջ 11:
- 6 Մոռացված լինելու իրավունքն արտացոլում է անհատի պահանջը՝ ինտերնետային տիրույթից հեռացնելու կամ երրորդ անձանց անհասանելի դարձնելու իրեն վերաբերող որոշ տեղեկություններ, որոնք խոչընդոտում են իր հասարակությանն ինտեգրվելու և այլ իրավունքների պաշտպանությանը: Այս իրավունքը բնութագրվում է որպես կյանքի անցյալը և չկատարվող իրադարձությունները լուրջան մատնելու իրավունք:
- 7 Տե՛ս նույն տեղում էջ 43 և Warren S., Brandeis L. The right to Privacy // Harvard Law Review, 1890, Dec. 15, էջ 193:
- 8 Տե՛ս Бентам И., О судоустройстве, СПб., 1860, էջ 106:
- 9 Տե՛ս Филимонов Б.А., Институт запретов доказывания в уголовном процессе ФРГ // Вестник МГУ, Серия 11, Право, 1986, № 6, էջ 47:
- 10 Տե՛ս Աktуальные проблемы охраняемых федеральным законом тайн в российском уго-

ловном судопроизводстве: монография, -М., Юрлитинформ, 2014, էջ 11:

- 11 Տե՛ս Смирнов В.И., Ноу-хау в российском законодательстве // Интеллектуальная собственность, 2000, № 1, էջ 34-37:
- 12 Տե՛ս А. Кибальник, И. Соломоненко, «Российская юстиция», N 2, февраль 2001, էջ 53:
- 13 Տե՛ս Кучеров И.И., Торшин А.В., Налоговая тайна: правовой режим защиты информации. М., 2003, էջ 30-31:
- 14 Տե՛ս Смолькова И.В., Проблемы охраняемой законом тайны в уголовном процессе, М., 1999, էջ 14-17.
- 15 Տե՛ս Мазуров В.А., Тайна: государственная, коммерческая, банковская, частной жизни. Уголовно-правовая защита: Учебное пособие/ под науч. рук. д-ра юрид. н., проф. С.В. Землюкова, М., 2003. էջ 11:
- 16 Տե՛ս Бражник С.Д., Преступления в сфере компьютерной информации / С.Д. Бражник. -Ярославль: Изд-во Яросл. гос. ун-та, 2000, էջ 9:
- 17 Տե՛ս Աktуальные проблемы охраняемых федеральным законом тайн в российском уголовном судопроизводстве: монография, -М., Юрлитинформ, 2014, էջ 11:

RESUME - РЕЗЮМЕ

PRIVACY AS A SOCIAL LEGAL INSTITUTION

V. Sukiasyan

*Assistant to the judge of the Criminal chamber of the RA Cassation court,
PhD student of the Chair of Criminal Law and Criminal Procedure Law of RAU
Institute of Law and Politics*

This article discusses the institution of secrecy, which covers a wide range of rather diverse social relations that arise in various fields of activity of an individual, society and the state. The content of any secret, regardless of the specifics of its varieties, is that the subject of the secret is information that is not intended for a wide range of people, their disclosure may lead to undesirable consequences for the custodians and carriers of the secret.

In legal terms, the institution of secrecy is of interest from the position of limiting the publicity of the criminal process and defining the boundaries of interference in its scope, developing guarantees for its protection. The study replenishes the theoretical achievements of the science of the criminal process regarding the use in the criminal process of information constituting a secret protected by law.

Keywords: *privacy, restriction of law, court, access to information, privacy, confidential information.*

ТАЙНА КАК СОЦИАЛЬНО-ПРАВОВОЙ ИНСТИТУТ

В. Сукиасян

*Помощник Судьи Уголовной палаты Кассационного суда РА,
аспирант кафедры уголовного права и уголовно-процессуального права
Института права и политики РАУ*

В данной статье рассматривается институт тайны, который охватывает широкий спектр достаточно разнородных общественных отношений, возникающих в различных сферах деятельности личности, общества и государства. Содержание любой тайны вне зависимости от специфики ее разновидностей заключается в том, что предмет тайны образуют сведения, не предназначенные для широкого круга лиц, их разглашение может повлечь нежелательные последствия для хранителей и носителей тайны.

В правовом отношении институт тайны представляет интерес с позиции ограничения гласности уголовного процесса и определения границ вмешательства в сферу его действия, разработки гарантий его защиты. Исследование пополняет теоретические достижения науки уголовного процесса, касающиеся использования в уголовном процессе сведений, составляющих охраняемую законом тайну.

Ключевые слова: *тайна, ограничение права, суд, доступ к информации, частная жизнь, конфиденциальная информация.*

Բանալի բառեր - *գաղտնիք, իրավունքի սահմանափակում, դատարան, տեղեկության հասանելիություն, մասնավոր կյանք, կոնֆիդենցիալ տեղեկություն:*

Վ. Սուքիասյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական, ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ, էլ. փոստ՝ varazdatsukiasyan@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 11.09.2019, տրվել է գրախոսության՝ 11.09.2019, երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լ. Թաղևոսյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 24.10.2019